

---

## ԱՐԵՎՄՏԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԶԲԻՆ

### ԳԵՎՈՐԳ ՄԵԼքՈՆՅԱՆ

19-րդ դարի վերջին և հատկապես 20-րդ դարի սկզբին գնալով ուժեղանում էր Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի վրա, սակայն այն նկատելիորեն մեծացավ Երիտրուրքերի՝ 1908 թվականին իշխանության գալուց հետո<sup>1</sup>: Եթե Անգլիան, Ֆրանսիան մեծ ներդրումներ էին կատարել Թուրքիայի տնտեսության ոլորտում, ապա Երիտրուրքերի իշխանության տարիներին գերմանացիները կարողացան ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և ռազմական ծանրակշիռ ներկայություն ապահովել այդ երկրում, ինչի վկայությունն էր 1913 թվականի մայիսի 22-ին Երիտրուրքական կառավարության պաշտոնական հրավերով Կ.Պոլիս ժամանած գերմանական նոր գինվորական առաքելությունը Լիման ֆոն Սանդերսի գլխավորությանը<sup>2</sup>: Թուրքիայում գերմանացիները այնքան ազդեցիկ էին, որ անգամ կառավարական շենքերի անվտանգությունը ապահովում էին գերմանացի գինվորակաները<sup>3</sup>:

Թուրքական կայսրության վրա քաղաքական և տնտեսական ազդեցության անրապնդմանը զուգընթաց՝ նշանակալի էր դառնում գերմանացիների հետաքրքրությունը արևմտահայության խնդիրներով՝ հատկապես Բաղդադի Երկաթուղու շինարարության անբողջ ընթացքում: Երկաթուղու կառուցման գործընթացը սկսվել էր դեռևս 1888 թվականին, երբ «Գերմանական բանկը» պայմանագիր կնքեց թուրքական կառավարության հետ, ինչն էլ հնարավորություն ընձեռեց գերմանացիներին Բոսֆորից մինչև Պարսից ծոց Երկաթուղագիծ կառուցելու<sup>4</sup>: Բաղդադի Երկաթուղագծի կառուցման հավաստագիրը Գերմանիան ստացավ 1899 թվականին, իսկ կառուցումը սկսվեց 1903 թվականից<sup>5</sup>:

Գերմանացիները ցանկանում էին Բաղդադի Երկաթուղու իիման վրա Երկաթուղագծեր կառուցել նաև Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, ինչը, բնականաբար, հանդիպելու էր Ռուսաստանի դիմադրությանը: Վերջինս Թուրքիայի հետ ուներ համաձայնագիր, ըստ որի՝ առանց իր համաձայնության չէր կարող որևէ Երկաթուղագիծ կառուցվել Արևմտյան Հայա-

<sup>1</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965, էջ 126:

<sup>2</sup> Տե՛ս Փիրճիօքեր Գ. Արմենիա, 1915. Уничтожение Турцией культурного народа. Еր., 1991, էջ 62 :

<sup>3</sup> Տե՛ս Ակոպյան Ս. Մ. Западная Армения в планах империалистических держав. Еր., 1967, էջ 36:

<sup>4</sup> Տե՛ս Ստեփանյան Ստ. Արմենия в политике империалистической Германии (конец XIX–начало XX века). Еր., 1975, էջ 14:

<sup>5</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 127:

տանում<sup>6</sup>: Գերմանացիներին հաջողվեց ձեռք բերել Դիարբեքիրից Մուշ Երկաթուղու կառուցման թույլտվությունը<sup>7</sup>: ճիշտ է նկատում Ս. Ստեփանյանը, որ Բաղդադի Երկաթուղու կառուցմանը Գերմանիան ձգտում էր Ուլսաստանի հարավային շրջաններում տնտեսական և ռազմական հենարան ստեղծել<sup>8</sup>, իսկ Զ. Կիրակոսյանի բնորոշմամբ, գերմանական ինպերիալիզմի բաղդադյան ստրատեգիայի գլխավոր խնդիրն էր Օսմանյան կայսրությունը վերածել գերմանական Շնդկաստանի<sup>9</sup>: Ուստի Արևմտյան Հայաստանում Երկաթուղիների կառուցմամբ Գերմանիան ոչ միայն ձգտում էր լուծել տնտեսական, այլ նաև քաղաքական և ռազմական կարևոր խնդիրներ, քանի որ Երկաթուղին կամրապնդեր կապը Երկրի կենտրոնի և արևելյան հեռավոր մարզերի միջև՝ թուլացնելով Ուլսաստանի ավանդական ազդեցությունը հայաբնակ այդ տարածքներում: Միաժամանակ այն հնարավորություն կտար Ուլսաստանի դեմ պատերազմի դեպքում կազմակերպել զորքերի արագ տեղաշարժ:

Արևմտյան Հայաստանում տնտեսական ծանրակշիռ ազդեցություն ունենալով՝ Կայսերական Գերմանիան ձգտում էր պահպանել այդ տարածքները թուրքական պետության կազմում, սակայն նրա հաշվարկները ավելի հեռուն էին գնում, ինչի մասին է վկայում դեռևս 1913 թվականի սկզբին Կ.Պոլսում Գերմանիայի դեսպանության աշխատակից Սանդելշտամի գեկուցագիրը, որում ասվում էր. «Եթե հետագայում պարզվի, որ Թուրքիայի փլուզման գործընթացը այլևս հնարավոր չի լինի դադարեցնել, մեզ համար մեծ արժեք կունենա Փոքր Ասիայում մեր իրավունքների իրականացնան պարագայում մեր մեջքին ունենալ հայկական տարրը»<sup>10</sup>: Սա նշանակում է, որ մերձավորակելյան իր քաղաքականության իրականացնան տեսանկյունից Գերմանիան մեծապես կարևորում էր հայկական գործոնը՝ այն դիտելով ոչ թե խոչընդոտ գերմանական շահերի ընդլայնման ճանապարհին, այլ, ընդհակարակը, ճիշտ քաղաքականության իրականացնան պարագայում՝ դրական գործոն: Այս իմաստով հետաքրքիր տեսակետ է արտահայտել Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը՝ Գերմանիայի արտգործնախարար ֆոն Յագովին 1913 թ. հունիսի 5-ին գրած գեկուցագրում. «...Առանց Հայկական հարցը լուծելու անհեռանկարային է ցանկացած քաղաքականություն, որն ուղղված կլինի թուրքական տիրապետության պահպաննանը: Եթե գործը հասնի բաժանմանը, ապա հայերը մեզ հարկավոր կլինեն մեր դիրքերի ամրապնդման համար... Յյուպատոսները պետք է լինեն այնպիսի մարդիկ, ովքեր ամփոփապես կվարողանան մարտական գործողությունների մեջ մտցնել ոստիկանությունը կամ ռազմական ջոկատը: Այդ պատճառով անհրաժեշտ է՝ նշված վայրերում լինեն օտարերկրացի սպաներ՝ օժտված կառավարման լծակներով... Եթե, օրինակ, Ադամայում գտնվեր գերմանացի մայոր՝ հրամանատարի կարգավիճակով, ապա այն-

<sup>6</sup> Տես Բ. Իշխանյան, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսական-քաղաքական փոխարարությունները, Թիֆլիս, 1915, էջ 26:

<sup>7</sup> Տես Ակոնյան Ս. Մ., նշվ. աշխ., էջ 53:

<sup>8</sup> Տես Ստեփանյան Շ. Ռ., նշվ. աշխ., էջ 21:

<sup>9</sup> Տես Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 127:

<sup>10</sup> Նորբերտ Զառուա, Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914), Եր., 2008, էջ 201:

տեղ չէին լինի նման անկարգություններ... Յայկական հարցի լուծումը հիմնականում վերաբերում է ճանապարհների և երկաթուղիների կառուցմանը, որին, հասկանալի պատճառներով, հակադրվում է Ռուսաստանը»<sup>11</sup>:

Ըստ այդմ՝ կարող ենք փաստել, որ

ա. գերմանացի դիվանագետները քաջ գիտակցում էին, որ առանց Յայկական հարցի լուծման հնարավոր չէ կայունություն ապահովել Թուրքիայում: Սակայն նրանք Յայկական հարցի լուծումը պատկերացնում էին երկրորդական նշանակություն ունեցող բարեփոխումներ իրականացնելու և այդ հարցում ռուսական նախաձեռնությունները խափանելու միջոցով:

բ. Գերմանացիները, սկզբունքորեն դեմ լինելով Թուրքիայի նասնատմանը, այնուամենայնիվ չէին քացառում դեպքերի նման ընթացքը և բաժանման պարագայում հայերին դիտում էին որպես հնարավոր դաշնակիցներ Արևելքում իրենց քաղաքականությունն իրականացնելու գործում: Յարկ է նշել նաև, որ նրանց համար չափազանց կարևոր էր այն հարցը, թե Օսմանյան կայսրության վիլուգման հետևանքով ստեղծվող անկախ կամ կիսանկախ Արևմտյան Յայաստանը ինչպիսի քաղաքական կողմնորոշում կունենար: Իսկ քանի որ արևմտահայության մեծամասնությունը ռուսամետ կողմնորոշում ուներ, ուստի ինքնուրույն քաղաքական միավորի առաջացումը չէր համապատասխանում Գերմանիայի շահերին:

գ. Յայերի անվտանգությունը պահովվելու պատրվակով գերմանացիները ձգտում էին հայարնակ շրջաններում իրենց ռազմական ներկայացուցիչներին նշանակել, ինչը ավելի էր անրապնդրում Գերմանիայի ոլորտը տարածաշրջանում: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, գերմանացի գինվորականները ոչ միայն չխոչընդոտեցին Յայոց ցեղասպանության իրականացումը (քացառությանք հատուկենտ անհատների), այլև երբեմն ուղղակիորեն մասնակից դարձան այդ կոտորածներին:

Այսպիսով, Արևմտյան Յայաստանում գերմանացի դիվանագետները հայկական տարրի պահպանումը չէին համարում գերմանական շահերին խոչընդոտող գործոն, մինչդեռ շատ հեղինակներ փորձել են հաստատել ճիշտ հակառակը՝ իհմք ընդունելով գերմանացի հայտնի քաղաքագետ Ռորբախի հետևյալ արտահայտությունը. «.... Եթե Թուրքիային հաջողվեր իր մահմեղական բնակչությանը տեղաշարժել դեպի հյուսիս և սահմանակից դարձնել Ռուսաստանի հետ, ապա կձևավորվեր 14-15 միլիոնանոց բնակավայր, որը դիմադրող ահօնելի ուժ կդառնար: Եվ քանի որ հայերը խոչընդոտում էին այդ ծրագրի իրագործմանը, ապա պետք էր վստարել այդ երկրամասի բնիկ, տեղացի բնակչներին՝ հայերին»<sup>12</sup>: Անշուշտ, այստեղից չի հետևում, թե նրանք ինչպիսի դիրքորոշում կդրսնորեին Յայկական հարցում՝ Թուրքիայի ամբողջականության պահպանմանը միտված իրենց քաղաքականության դեպքում:

Բանն այն է, որ գերմանական դիվանագետներին առաջին հերթին հետաքրքրում էր Յայկական հարցում ռուսական նախաձեռնությունների

<sup>11</sup> Wolfgang Gust, German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity. Watertown, MA: Blue Crane Books, 1996, p. 304.

<sup>12</sup> Պ. Ռորբախի այդ հայտարարությունը հրապարակվել է ֆրանսիական "Temps" ազդեցիկ թերթում, որտեղից այն 1916 թ. ապրիլի 15-ին արտատպվել է «Կովկասի խոսք» թերթում (№ 84, էջ 3):

տապալումը, որը դրսնորվեց նաև 1913 թ. հունիսի 8-ին, երբ Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը դեսպանների կոնֆերանսին ներկայացրեց «հայկական բարեփոխումների» իրականացման ռուսական առաջարկը, որը հեղինակի՝ դեսպանատան ռուսական թարգմանչի անունով կոչվեց Մանդելշտամի նախագիծ<sup>13</sup>, որով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների՝ Վանի, Երզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվագի միավորումը մեկ հայկական նահանգի կազմում։ Այն պետք է դեկավարեր քրիստոնյա գեներալ-նահանգապետը։ Թե՛ թուրքերը և թե՛ նրանց սատարող գերմանացիները, զգալով, որ այդ ծրագրով ռուսական սահմանագծի վրա ստեղծվող և գրեթե ինքնավար կարգավիճակ ունեցող հայկական նահանգը կարող է տապանաքար դաշնալ պանթուրքական ծրագրերի համար, անմիջապես ձեռնամուխ եղան դրա տապալման գործին։ Ընդ որում գերմանացի դիվանագետներն այս նախագծի տապալումը կարևորում էին ոչ թե այն պատճառով, որ նրանք կտրականապես դեմ էին հայկական վիլայեթներում բարենորոգումների անցկացմանը, այլ որ ննան առաջարկով հանդես էր գալիս հենց Ռուսաստանը։

Հատկանշական է, որ կտրականապես դեմ լինելով բարենորոգումների ռուսական ծրագրին, այնուամենայնիվ գերմանացիները նույնպես շահագրգուված էին հայկական նահանգներում ոչ նշանակալի փոփոխությունների իրականացմամբ։ Ուստի նրանք փորձում էին հանգել թուրքերին, որ վերջիններս իրականացնեն որոշ բարեփոխումներ՝ քաջ գիտակցելով, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ռուսական կողմի պահանջի լիակատար տապալումը ավելի կխորացնի հայության շրջանում հակագերմանական տրամադրությունները, կարագացնի թուրքիայի մասնատումը և իրենց կզուկի դեպքերի զարգացման վրա ազդելու հնարավորությունից։ Այդ է պատճառը, ինչպես իրավացիորեն նշել է Ա. Մանդելշտամը, որ Հայկական հարցի առթիվ Գերմանիան սկսեց բանակցել ռուսների հետ. «Երկու նպատակով. նախ, որպեսզի հարմար ժամանակին հիշեցնի Դուանը, որ շնորհիվ իր միջանտության նա զսպեց Ռուսաստանին պահանջելու լայն բարենորոգումներ։ Երկրորդ, որ իր կողմը գրավի հայերի ուշադրությունը...»<sup>14</sup>. Նման քաղաքականությամբ գերմանացիները, փաստորեն, մի կողմից փորձում էին պահպանել թուրքիայի տարածքային անբողջականությունը, բայց և ոչ էական բարեփոխումներով իրենց կողմը գրավել հայությանը, իսկ մյուս կողմից՝ մեծ տերություններին հասկացնել, որ Արևմտյան Հայաստանը ևս զտնվում է Կայսերական Գերմանիայի շահերի ոլորտում, և Հայկական հարցի լուծման գործում պետք է հաշվի առնվեն նաև նրա շահերը, հակառակ պարագայում հարցի կարգավորմանն ուղղված գործներացը կտապալվի։ Այդ միտումը ակնհայտորեն դրսնորվեց թե՝ 1913 թ. հուլիսի Յենիկըյոյի կոնֆերանսում և թե՝ հուլիսի 23-ին, երբ Եռյակ դաշինքի տերությունները հանդես եկան բարենորոգումների թուրքական ծրագրի պաշտպանությամբ։ արդյունքը եղավ այն, որ բանակցությունները մտան փակուղի։ Ի վերջո, 1913 թ. սեպտեմբերին Վանգենհայմը, Գիրսը և Եվրոպական տերությունների մյուս ներկայացուցիչները կայացրին փոխզի-

<sup>13</sup> Տե՛ս Նորբերտ Զառուա, նշվ. աշխ., էջ 203:

<sup>14</sup> Ա. Մանդելշտամ, Երիտասարդ թուրքերի պետությունը, Ս. Էջմիածին, 1916, էջ 63:

ջումային որոշում, որը ամրագրվեց 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) կնքված ռուս-բուլղարական համաձայնագրով: Այն ստորագրեցին Թուրքիայում ռուսական գործերի հավատարմատար Գուլկիչը և Թուրքիայի մեծ վեզիր Սահիդ Յալիմ փաշան: Այդ համաձայնագրով Արևմտյան Յայաստանը բաժանվել էր Երկու նահանգի, որոնցից առաջինի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբերի նահանգները: Գերմանացիները հայության շրջանում իրենց ազդեցությունը մեծացնելու նպատակով այս համաձայնագրի կնքումը փորձում էին ներկայացնել որպես Գերմանիայի բարյացակամ դիրքորոշման արդյունք: Այդ է վկայում 1914 թ. փետրվարի 16-ին Երգրունում Գերմանիայի հյուպատոս Անդերսի գրած նամակը՝ Կ.Պոլսում գերմանական դեսպանության խորհրդական պարոն ֆոն Մուլիասին, որում ասվում է. «Այսօր ինձ այցելեց այստեղի հայ եպիսկոպոս Բեադեթյանը, իր համայնքի անունից շնորհակալություն հայտնեց բարենորոգումների ծրագրի ընդունման կապակցությամբ, կայսերական կառավարության կողմից բարենորոգման նախագծի համար պաշտպանության համար, որի շնորհիվ հիմնականում իրագործվեց այդքան երկար սպասված բարենորոգման գործը»<sup>15</sup>: Այսպիսով, գերմանական դիվանագիտական շրջանակների համաձայնության շնորհիվ ի վերջո հաջողվեց ստիպել թուրքական կառավարությանը բարենորոգումների հարցում գնալ որոշ գիշումների, որոնք, սակայն, համաշխարհային պատերազմի պատճառով մնացին չիրականացված:

Յայկական բարենորոգումների շուրջ բանակցություններն ընթանում էին միջազգային լարված իրադրության պայմաններում, քանի որ 1913 թ. հունիսի 30-ին սկսվել էր Բալկանյան Երկրորդ պատերազմը՝ Բուլղարիայի, նրա նախկին դաշնակցներ Սերբիայի, Հունաստանի և Չեռնոգորիայի միջև<sup>16</sup>: Սա թուրքերի համար հարմար առիթ էր, որպեսզի փորձեն վերադարձնել Բալկանյան առաջին պատերազմի տարիներին կորցրած ավելի քան 185 հազար քառ. կիլոմետր տարածքը<sup>17</sup>: Իսկ դա նշանակում էր, որ հայկական բարենորոգումների հարցը նորից մնվելու էր հետին պլան, և մեծ տերությունների ուշադրությունը կրկին սկսվելու էր բալկանյան խնդրի վրա: Դեռևս 1912 թ. հոկտեմբերի 1-ին սկսված Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Օսմանյան Թուրքիան Եվլոպայում կորցրել էր իր նվաճած բոլոր տարածքները, բացի Արևելյան Թրակիայից<sup>18</sup>: Բալկանյան երկրորդ պատերազմում նույնպես Օսմանյան կայսրությունը ծանր պարտություն կուց՝ կորցնելով իր տարածքի մեկ Երրորդը<sup>19</sup>: Փաստորեն դա պարտություն էր նաև կայսերական Գերմանիայի բալկանյան քաղաքականության համար: Եվ բնակ պատահական չէ, որ ավստրիական սոցիալ-դեմոկրատների հայտնի տեսաբաններից Օտտոն Բաուերը այդ կապակցությամբ պարզ

<sup>15</sup> Յ. Լեփսիուս, Գերմանիան և Յայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթրերի ժողովածու, հատոր I, Եր., 2006, էջ 100:

<sup>16</sup> Տես Ռ. Արամյան, Ռուսաստանի և Գերմանիայի քաղաքականությունը Արևմտյայաստանի բարենորոգումների հարցում (1912-1914 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, №10, էջ 22:

<sup>17</sup> Տես Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 99:

<sup>18</sup> Տես Վիլհելմ Բաում, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010, էջ 70:

<sup>19</sup> Տես նույն տեղը, էջ 70:

ու որոշակի գրել է. «...Մակեդոնիայի և Թրակիայի ճակատամարտերում Թուրքիայի հետ միասին պարտվել է նաև գերմանական իմպերիալիզմը»<sup>20</sup>: Այնուհանդերձ, Բալկանյան պատերազմում թուրքական բանակի կրած ծանր պարտությունը արևմտահայության համար ունեցավ բացասական հետևանքներ, քանի որ իր քաղաքական օրակարգից հանելով բալկանյան խմբիրը՝ Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել կայսրության արևելյան շարժաններին՝ բացառելու Բալկանյան երկրների օրինակով այդ տարածքների անջատումը կայսրությունից:

Բալկանյան պատերազմներում Թուրքիան ոչ միայն կորցրեց Եվրոպայում նվաճած իր տարածքները, այլև կանգնեց ամբողջ կայսրության մասնատման վտանգի առջև, ինչը չէր համապատասխանում նաև Գերմանիայի շահերին: Այդ է պատճառը, որ Բալկանյան պատերազմներից հետո զգալիորեն մեծացավ Գերմանիայի ռազմական աջակցությունը Թուրքիային: Օսմանյան կայսրությունում գտնվող գերմանացի գինվորականները ձգուում էին թուրքական բանակի մարտունակությունը բարձրացնել այն աստիճանի, որ պատերազմի դեպքում ևս կարողանա լուրջ խնդիրներ առաջացնել ռուսական կովկասյան զորքերի համար: Ուշագրավ է, որ եթե Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, որ քաջատեղյակ էր Թուրքիայի ներքին խնդիրներին և բանակի մարտունակությանը, 1914 թ. հուլիսի 18-ին Բեռլին ուղարկած գեկուցագրում ասում էր, թե «Թուրքիան այսօր դեռ, անկասկած, լրիվ անընդունակ է դաշինքի: Նա իր դաշնակիցների համար միայն թեռ է դառնալու՝ առանց նվազագույն առավելություններ տալու», ապա թուրքերը, ընդհակառակը, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների մոտ փորձում էին ստեղծել տպավորություն, որ թուրքական բանակը ի վիճակի է լուրջ հարված հասցնելու ռուսական կովկասյան բանակին: 1914 թ. հուլիսի 20-ին Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիշինին իր գեկուցագրում նշում էր ենվերի այն միտքը, որ Թուրքիան 20 օրում կարող է 200-հազարամոց լավ գինված զորք տրամադրել, իսկ ավելի ուշ՝ 100 հազար, որ Թուրքիան ի վիճակի է Ռուսաստանի դեմ հրահերելու Ադրբեյջանի մահմեդական ազգաբնակչությանը<sup>21</sup>: ճշմարտությունն այն է, որ այդ ժամանակ թուրքական բանակը բավականին թույլ էր, և եթե չլիներ Գերմանիայի ցուցաբերած ռազմական աջակցությունը, այն հազիվ կարողանար երկարատև պատերազմ վարել:

Գերմանիայի կառավարական շրջաններում Թուրքիայի նկատմամբ վերաբերնումքը կտրուկ փոխվեց 1914 թ. հունիսի 28-ին Սարաևո քաղաքում սերբական ահաբեկչական կազմակերպության կողմից ավստրիական թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունից հետո, որը առիթ դարձավ, որ 1914 թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1) Գերմանիան պատերազմ հայտարարի Ռուսաստանին, երկու օր հետո՝ Ֆրանսիային, իսկ հաջորդ օրը՝ Անգլիան Գերմանիային<sup>22</sup>: Այսպիսով, սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որը մղվում էր Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուր-

<sup>20</sup> Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 53:

<sup>21</sup> Տես Ա. Օհանջանյան, 1915 թվական. Անհերքելի վկայություններ, Եր., 1997, էջ 76:

<sup>22</sup> Տես Յ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 237:

քիա, Բուլղարիա) և Անտանտի (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, որոնց պատերազմի ընթացքում միացան ԱՄՆ-ը, ճապոնիան, Իտալիան) միջև:

Այս պայմաններում ընթացող թուրք-գերմանական գաղտնի բանակցությունները ի վերջո հանգեցրին այն բանին, որ 1914 թ. հուլիսի 27-ին կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին կնքելու ռազմական գաղտնի դաշինք, իսկ 1914 թ. օգոստոսի 2-ին Վանգենհայնը և ավագ վեզիր Սայիդ Յալիմը ենվեր և Թալեաթ փաշաների ներկայությամբ կնքեցին այն, որով Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի հարձակման դեպքում աջակցել Կայսերական Գերմանիային, իսկ վերջինս իր հերթին պարտավորվում էր չկնքել այնպիսի պայմանագիր, որի հետևանքով Օսմանյան կայսրությունը կարող էր ունենալ տարածքային կորուստներ<sup>23</sup>: Ընդամենը մի քանի օր անց՝ օգոստոսի 6-ին, Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայնը Թուրքիայի մեջ վեզիր Սեհմեդ Սայիդ Յալիմ փաշային ուղարկած նամակում հավաստիացնում էր, որ Կայսերական Գերմանիան պատերազմի հաղթանակի դեպքում կաջակցի երիտրուրքերի նվաճողական ծրագրերի իրականացմանը<sup>24</sup>: Նույն օրը՝ օգոստոսի 6-ին, Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքվեց լրացուցիչ համաձայնագիր, որը, ըստ էության, արդյունք էր թուրքական կողմի պահանջի, քանզի նպատակ ուներ պատերազմին գերմանական կողմից մասնակցելու դեպքում անրապնդելու թուրքերի շահերը, ինչպես նաև ապահովելու Արևելքում նոր տարածքների նավաճումը: Յամաձայնագրի հինգերորդ կետում նշվում էր. «Գերմանիան կստիպի ուղղել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններն այնպես, որ ապահովի Թուրքիայի անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»<sup>25</sup>: Պայմանագրում հստակ նշված չէին այն տարածքները, որոնք հաղթանակի դեպքում գերմանացիները կհամաձայնեին, որ անցնեն Թուրքիային: Իսկ դա նշանակում է, որ Ելենով Արևելքում իրենց ունեցած շահերից՝ գերմանացիները խուսափում էին որոշակի ծևակերպումներից և մտադիր չէին հաղթելու պարագայում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածքները զիջել թուրքերին: Դա ակնհայտորեն դրսևորվեց 1918 թ. Բաքումի բանակցությունների ընթացքում: Ի դեպք՝ ասենք, որ օգոստոսի 2-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված համաձայնագրին օգոստոսի 3-ին միացել էր նաև Ավստրո-Հունգարիան, ուստի նույն օրը Թուրքիան հանդես էր եկել իր չեզոքության մասին հայտարարությամբ<sup>26</sup>:

Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու նպատակով Գերմանիան գործի դրեց նաև իր տնտեսական կարողությունները: Այդ է վկայում 1914 թ. հոկտեմբերի 10-ին Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինի գեկուցագիրը<sup>27</sup>: Բայց անգամ դրամական օգնություն ստանալու դիմաց թուրքական դեկավարությունը չէր շտապում մտնել պատերազմի մեջ, ինչն էլ ստիպեց, որ Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայնը սպառնա, թե

<sup>23</sup> Տե՛ս Վ. Գուստ, Յայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Եր., 2002, էջ 142:

<sup>24</sup> Տե՛ս Լյուծություն Ե. Փ. Տուրցիա և գույքը 1914–1918 թ. Յանապահության պատմության մեջ, 1966, էջ 47:

<sup>25</sup> Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 202:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 202:

<sup>27</sup> Տե՛ս Ա. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 79:

գերմանական «Գյորեն» և «Բրեսլաու» ռազմանավերը, որոնք իբր պատկանում էին Թուրքիային, առանց թուրքական կառավարության համաձայնության Սև ծովում ռազմական գործողություններ կախածենեն ընդդեմ Ռուսաստանի: Գերմանացիների գործողություններն այնքան ակնհայտ էին, որ դեռևս հոկտեմբերի 17-ին «Հորիզոն» օրաթերթը գրում էր. «...Եթե Թուրքիան չցանկանա էլ, այն սկսողները՝ թուրք դրոշակի տակ՝ լինելու են գերմանացիները»<sup>28</sup>: Այս փաստը ևս մեկ անգամ հաստատում է այն իրողությունը, որ Թուրքիան գտնվում էր Գերմանիայի լիակատար հսկողության ներքո, հետևաբար պատերազմի ընթացքում երիտրուրքերի կողմից արևմտահայության նկատմանը նախապատրաստվող կոտորածներին քաջատեղյակ էին գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաները:

Թուրքական կառավարությունը ծգտում էր ստեղծել այնպիսի իրավիճակ, որ առաջինը պատերազմ հայտարարի Ռուսաստանը, որը երիտրուրքերին հնարավորություն կտար հանդես գալու պաշտպանվողի դիրքերից և մահմեդական տարրին ուղղորդելու դեպի «սրբազն պատերազմ»: Սակայն այս հաշվարկները չարդարացան, քանի որ Եվրոպական ճակատներում գերմանական բանակների կրած անհաջողությունները գերմանացիներին ստիպեցին ուժեղացնելու ճնշումները երիտրուրքերի վրա, որպեսզի վերջիններս արագացնեն Թուրքիային պատերազմի մեջ ներգրավելու գործնթացը: Այդ ճնշումը դրսերվում էր ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Ուստի դեռևս սեպտեմբերի սկզբներին ակնհայտ էր, որ թուրքերը պատրաստվում են պատերազմի, ինչի մասին են վկայում ռուս-թուրքական սահմանին տեղի ունեցած միջադեպերը: Սեպտեմբերի 2-ին Ռումիայից ստացված հեռագրում ասվում էր, որ պարսկական սահմանագլխի կանոնավոր գործերը Թուրքիան փոխադրում է Էրզրում: Կաղզվանից մեկ այլ հեռագիր հայորդում էր ռուսական սահմանագիտում թուրքական գործերի կենտրոնացման ու պատրաստությունների մասին<sup>29</sup>: Դա նշանակում էր, որ թուրքական կառավարության գերմանամետ ազդեցիկ խնբավորումը պատրաստվում էր Երկիրը ներքաշել պատերազմի մեջ, որը ակնհայտ դարձավ արդեն հոկտեմբերի 22-ին, երբ Ենվեր փաշայի հրամանով պաշտոնապես ամրագրվեց գերմանաթուրքական նավատորնի միավորումը: Իսկ ընդամենը մի քանի օր անց՝ 1914 թ. հոկտեմբերի 27-ին և 29-ին, թուրքական նավատորմը գերմանացի հրամանատար Սուլշոնի դեկավարությամբ Սև ծովում հարձակվեց ռուսական նավերի վրա և ռմբակոծեց Օդեսա, Սևաստոպոլ, Թեոդոսիա, Նովոռոսիյսկ նավահանգիստները<sup>30</sup>: Նոյեմբերի 2-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, իսկ նոյեմբերի 11-ին սուլթան Մեհմեդ Ֆարիհի թուրքերին պաշտոնապես պատերազմի կոչ արեց ընդդեմ Ռուսաստանի<sup>31</sup>: Դրանով էլ Կովկասյան ճակատում սկսվեցին ռազմական գործողությունները, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան արևմտահայության համար:

Այն փաստը, որ Կայսերական Գերմանիան դրական մոտեցում ցուցաբերեց հայարձակ նահանգներում բարեփոխումների իրականացման

<sup>28</sup> «Հորիզոն», № 230, 17 հոկտեմբերի 1914 թ., էջ 1:

<sup>29</sup> Տե՛ս «Հորիզոն», № 194, 4 սեպտեմբերի 1914 թ., էջ 1:

<sup>30</sup> Տե՛ս Յ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 215:

<sup>31</sup> Տե՛ս նոյեմբերը, էջ 215:

նկատմամբ, ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նման դիրքորոշումը նախապատերազմյան ժամանակաշրջանում պայմանավորված էր մի քանի գոտնութերով, որոնցից առաջնայինը արևմտահայության շրջանում ռուսական ավանդական ազդեցության թուլացումն ու գերմանական կողմնորոշման ընդլայնումն էր, հայարնակ տարածքներում թուրքական տիրապետության անրապնդումը և Արևմտյան Հայաստանում գերմանական տնտեսական ու քաղաքական ազդեցության նեծացումը: Սակայն պատերազմի նախօրյակին ակնհայտ էր, որ արևմտահայության քաղաքական դիրքորոշումը շարունակում է մնալ ռուսամետ, իսկ Հայկական հարցը շահարկվում էր մեծ տերությունների կողմից: Այդ իսկ պատճառով համաշխարհային պատերազմի նախօրեին գերմանացիների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ առավել բացասական դրսերում ստացավ, որի մասին է վկայում Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի՝ դեռևս պատերազմից առաջ հայտնած այն տեսակետը, որ հայերը պետք է ընդունեն իսլամ, միայն այդ դեպքում նրանց հանգիստ կրողնեմ<sup>32</sup>: Գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաների այս և նմանատիպ հայտարարությունները վկայում են, որ դեռևս Աթաղին համաշխարհային պատերազմի նախօրեին երիտթուրքերը մշակել-պատրաստել էին արևմտահության տեղահանման հրեշավոր ծրագիրը, որին քաջատեյակ էին գերմանացիները, որոնք հետագայում ոչ միայն չփորձեցին խոչընդոտել, այլև նաև գործուն նաև նակցություն ունեցան այդ ոճագործության կազմակերպմանն ու իրականցմանը:

**ГЕВОРГ МЕЛКОНЯН – Позиция Германии в отношении западного армянства в начале Первой мировой войны.** – В статье анализируется позиция кайзеровской Германии в отношении западных армян накануне и в начале Первой мировой войны. Факты показывают, что для Германии главным было сохранить статус-кво Турции, а также усилить свое влияние на западных армян. Перед самой войной германское руководство знало план изгнания западных армян, разработанный младотурками, и оно не только не препятствовало ему, но в отдельных случаях активно содействовало его реализации.

**GEVORG MELQONYAN – The Position of Germany toward Western Armenia at the Beginning of the I World War.** – The problem, which is being discussed in this article, concerns the attitude of Germany towards Western Armenians on the eve and at the beginning of World War I. The detailed analysis of the facts shows that one of the main problems for Germany was not only maintaining the status quo of Turkey, but also increasing its influence on Armenians. But German high officials knew about the Young Turks' plan of Western Armenians' deportation and not only tried not to prevent from realizing that plan, but in some cases actively supported its implementation.

<sup>32</sup> Տե՛ս Ստեփանյան Ստ. Գерманские источники о геноциде армян. Еր., 1991, էջ 63: